


ՀԱՅԳՈՒԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ Զ ԿԱՐՊԵՏՅԱՆԸ, ՎԱՐԴԵՏԸ, ՍԻԹՈՎԸ, ԿԱՄՈՎԸ, ԿԱՄՈՎԱԿԱՆԸ, ՎԱՀԱՆ ԱՐՔԵՐ, ԿՈՍՏԱՆԵՑՄԱՆԸ ԵՎ, ՀՈՎԿԱՅՈՒ ՃԵՄԱԿՈՒՅՆ ՏԵՂՄԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԸ ՄԱՅԻ ԱԹՈՒՐ ՆՈՐԴՅՈՒ ՍԱՐԿՈՎԱԿԱՅԵՐՆ





## ԱՎԵՏԻՔ ԻՍՍՀԱԿՅԱՆ

### ԷԶՄԻԱԾՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ\*

301 թվին առաջալ Գրիգոր Պարթևի քարոզներով հայոց Տրդատ թագավորն ընդունեց և հոչակեց քրիստոնեությունը իբրև պետական կրոն, և բովանդակ հայ ժողովրդի հետ մկրտվեց—և այդ ժամանակ, 303 թվին հիմնվեց Էջմիածնի տաճարը և կաթողիկոսությունը Արշակունիների մայրաքաղաք Վաղարշապատում:

Սուարյալ Գրիգորը կոչվեց Հայաստան աշխարհի «Սուրբ Լուսավորիչ» և եղավ առաջին կաթողիկոսը, քահանայապետը, եկեղեցու բարձրագույն իշխանը:

Էջմիածնի հիմնարկության պատմական փաստը հյուսված է հրաշքներով. և ժողովրդական ավանդություններով:

Դեռ 4-րդ դարում ստեղծված ավանդության համաձայն, Լուսավորիչը իր տեսիլքի մեջ տեսնում է, որ Քրիստոս, Աստծու միակ Որդին, Միածինը, իշնում է երկնքից և նրան ցույց է տալիս այն վայրը, որ պիտի կառուցվի տաճարը և լույսերի մեջ գծված՝ տաճարի կաղապարը (Մոդել):

Ալդանելից ծագում է տաճարի անունը՝ Էջմիածնի, այսինքն՝ Միածինը իշավ:

Ժողովրդի ավանդությամբ, Քրիստոսը նշեց շինել տաճարը այն վայրի վրա, որ նոյ Աահապետը շրմելելից հետո՝ Արարատ լեռից իշնելով գոհաբանական զոհ մատուցեց Աստծուն:

Դարձալ ժողովրդի ավանդությամբ Տրդատ արքան, որ հսկա մարդ էր, իր ուսերին դրած քերեց Արարատ լեռից ահագին ժայռեր, որոնք կագմեցին տաճարի անսասան հիմքերը:

Հնության հմայքով օծված, հրաշքներով, ավանդություններով նվիրա-

\* Մեծ ու հայրենասեր բանաստեղծ Ավետիք Խամակյանի ծննդյան 100-ամյակի առիթով երախտագիտությամբ հրատարակում ենք նրա սովոր անտիպ ձեռագիր նամակը, որը գրված է Երևանում, 1944 թվականի՛ նվիրված հայ ժողովրդի պատմության մեջ Մայր Արքու և Էջմիածնի պատմական, հայրենասիրական, մշակութային դերին և նշանակությանը:

կանացած Էջմիածինը դարձավ նայ ժողովրդի համար ազգային ամենաստաշին սրբավայրը:

Հայ ժողովրդը հավատաց նրա հրաշագործ գորությանը, երկնքից ուղարկված նրա էռթյանը: Եվ այսպիսով նա ներքնապես ամրացած կարդացալ դիմանալ բախտի հարվածներին և հարատևեց դարեր ու դարեր:

Էջմիածինը կոչվեց՝ «Կարողիկե եկեղեցի, Մայր եկեղեցի, Մայր Աթոռ, սուրբ Էջմիածին»:

Սակայն Էջմիածին պատմական դերը, նրա գոյության իմաստու ու իրավունքը անհամանատ ավելի նօդորացավ և անհրաժեշտ դարձավ հայ ժողովրդի համար այն դժբախտ օրից, երբ մենք 14-րդ դարում կորցրինք մեր պետականությունը:

Այդ ժամանակից հայ եկեղեցին փոխարինեց նայ պետությանը, նա դարձավ և կոչվեց նոգեսր իշխանություն:

Եկեղեցու պետը ուներ իր գանձ, հրամաններ էր արձակում, կոնդակներ էր ուղարկում, բանադրում էր, պատժում կրոնազանցներին, ազգութացներին, անքարոյականներին:

Հայ պետության անկյունով՝ նայ ժողովրդը մնաց ամբողջապես իսլամական ժողովրդների ծովում, ենթարկված ամենինա արշավանքների ավերածությունների և կոտորածների, բռնականների հարստահարությունների և կրոնական մոլեուանդ հաղածանքների:

Միակ ուժը, զորությունը և պաշտպանությունը, որ կար, որին ընդունում էին առավել կամ նվազ չափերով խամաց պետությունները—դա Էջմիածինն էր, կաթողիկոսությունը: Նրա ձեռքում էին կենտրոնացած ազգային ներքին գործերը, նոգեսր-մշակութային բովանդակ կյանքը—կրոն, լեզու, բազմարիվ վանքերը, որ կային դպրոցներ, որ մշակվում էր գրականությունը: Դրանք ազգային գոյության վառարաններն էին, որոնք թշնամու աշքից վրիպած, արտաքինապես մոխրով ծածկված կրակի մեջ՝ մշտապես կալծում էին ժողովրդի ազատության բաղանքները, լուսավոր ապագայի հավատու ու հույսերը:

Այս նոգոր ազդակները դարերի իրենց ներուժ գործով պաշտպանեցին նայ ժողովրդին մահմետական դատավորություն, փրկեցին ձուլվելուց, իրեն ինքնուրույն ազգություն խապա ոչչանապություն:

Հայ պետականության ժամանակ կաթողիկոսն ընտրվում էր հայ թագավորների, նախարարների և նոգեսրականների կողմից: Նրանցից նետո՞ կաթողիկոսն ընտրվում էր բովանդակ հայ ժողովրդի և նոգեսրականների կողմից, որով նա կոչվում էր «Ամենայն Հայոց կաթողիկոս», բոլոր հայերի կողմից ընտրված: Այս իմաստով՝ նայ եկեղեցին դեմոկրատիկ և ժողովրդական եկեղեցու բնույթ ստացավ: Նրան հնագանություն էր հայրենիքի և պատմության բերումով ամբողջ երկրագնդի վրա ցրված հայությունը իր մշակութային, նոգեսր, ազգային ներքին բոլոր խնդիրներում:

Այսպիսով ցրված հայությունը համեմին Էջմիածինի իր ազգային միությունը ուներ, իր նեղինակավոր պետն ու առաջնորդը:

Ժողովրդը նեղ օրերում դիմում էր իր եկեղեցու պետին, ապաստանու էր նրան իշխողների հայածանքներից և հարստահարություններից պաշտպանվելու համար: Շատ ու շատ անգամ կաթողիկոսի միջամտությունը, աղերսները և բանկ նվերները դադարեցրել են հայածանքները:

Կաթողիկոսները մեծ հարգ ունեին իշխողների մոտ. հաճախ խորհրդատու էին նրանց, հաշտության միջնորդներ էին իրար նետ կովող իշխող-

ների միջև: Նադիր պարսից Շահի թագադրության հանդեսին մեծ շրով ներկա էր կաթողիկոսը և որը օրինեց շահի թուրը և կապեց նրա մեջքին:

Սովորաբաններն ու շահերը հայ եկեղեցու պետի հետ էին բանակցում հայերի վերաբերյալ ընդհանուր գործերի նկատմամբ: Հայ քաղաքականությունն էր վարում ևա: Պարսկաստանն ու Թուրքիան ձգուում էին իրենց գործած հողամասերի մեջ ունենալ Էջմիածինը՝ ավելի մեծ ազդեցություն ձեռք բերելու համար հայ ժողովրդի վրա:

Երբ ուսական ցարերը սկսեցին իշեն հարավ և կոփ էին մղում թուրքերի և պարսիկների դեմ, անմիջապես ուշը դարձրին Էջմիածնի վրա, որ տակավին գտնվում էր պարսկական իշխանության տակ: Ուսասատանում ցրված հայերի անունից միջամտեցին Էջմիածնի ներքին գործերի մեջ: Դիվանագիտական ճանապարհներով հաջողեցան իրենց թեկնածուն դնել կաթողիկոսական գահի վրա:

Էջմիածնի համակրանքը, որեմն, բովանդակ հայության համակրանքը, դարձավ Ուսասատանի կողմը, և ինարկե պակաս չին հայերին ազատագրելու ցարական խոստումները: Եվ նույնիսկ Ներսէն Աշտարակեցի կաթողիկոսը հայ կամավորների գլուխն անցած, ուս բանակի մեջ, կովում էր Պարսկաստանի դեմ:

Եվ առևսասրակ կաթողիկոսությունը միշտ էլ նպաստել է հայ ազատագրական շարժումներին, թե՛ միջին դարերում և թե՛ նոր դարերում, օրինակ 18-րդ դարում Սյունյաց Դավիթ Բեկի ապատամբության և ազատության սպարարին պարսիկ պետության դեմ:

Այնքան քաղաքական կշիռ ուներ Էջմիածինը, որ ուս-պարսկական առաջին պատերազմին, 1804 թվին, կովող կողմերը չեզոք գոտի ճանաչեցին Էջմիածնի տաճարը և նրա շուրջը:

Հայությունը, ուր որ գտնվելիս լիներ, սրտով և հոգով կապված էր Էջմիածնի հետ, օտարության մեջ նրա կարոտն էր քաշում: 1605 թվին պարսից Շահ-Աքսա արքան ավերելով Արարատյան համանգը՝ քազմահազար հայեր գաղթեցրեց Պարսկաստան առևտորը և արհեստները իր պետության մեջ զարգացնելու նպատակով: Սպահանի մոտ նոր քաղաք (Նոր Ջողա) շինեց նրանց համար՝ տալով զանազան արտոնություններ: Սակայն նրանք փարթամության մեջ առանց Էջմիածնի իրենց դժբախտ էին գտում: Շահը մտադրվեց քանդել Էջմիածնիը և նրա քարն ու հողը բերելով նոր Էջմիածնի կառուցել Սպահանում, քայլ հայերի թախանձանքով, հրաժարվեց այդ չար մտքից և միայն 15 քար տաճարից տեղափոխեց Սպահան, որ նոր եկեղեցու պատերի մեջ դրին, որոնց առջև Նոր Ջողայի հայերը աղոթում էին, ուստի էին գալիս, ափոփլում էին իրենց կարոտից ու վշտից:

Ժողովուրդների պատմության մեջ կրոնական հաստատության մի այսպիսի հշանակություն ունենալը հազվագյուտ երևույթ է, սակայն միանգամայն հասկանալի:

Օտար, դաժան պետությունների քմահաճույքներին ներթարկված հայ ժողովրդի համար Էջմիածնը՝ եկեղեցիների մայրը, հայրապետական Ալթոռը, այս ծանր ու տանջապահ դարերի ընթացքում, միակ ազգային հաստատությունն էր, որ տակավին հարատևում էր մենալ հայության ձեռքում:

Նա ազգային գոյության խարիսխն էր, ազգային միության սիմվոլը, հայ ժողովրդի զարգացման հայրենասիրական գգացմունքը ելք էր գտնում նրա մեջ, կրոն և ազգություն հոմանիշներ էին դարձել: Ստրկացած ժողովուրդը

իր մարդկային իրավունքները, հողաբերք, երազանքները մարմնացրել էր նրա մեջ:

Դրա համար հայերը բոլոր սրտով գործուրու կնա պահ, ու այս ինչնիր էին նրա գոյության և փառքին: Հեռավոր տեղերից ոխտի էին գալիս նրան, հարուստ նվաճելու էին ողարկում, գումարներ և ինչքեր էին լրացրում:

you know higher than most governments for  
local, neighborhood for the town government to have  
higher. Standard strategy is to get your local, the  
county, and both the neighbors, and especially in Western  
the government to give you money for

#### Նմուշ վարպետի սուսն ձեռագրից

Նրա տոնը ազգային ամենափառավոր տոնն էր ամենորեք, որ որ նայ կար:

Հիմ ու նոր բանաստեղծները, գուսաններն ու աշուղները բազմաթիվ երգեր, զույգեր են նվիրել նոսա:



ՄԱՅՐ ՏԱՏՅԱՆԻ ՀՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԺԱՄՄԱՍԱԿ ԽԱՄՈՒՆԻՄ. ՆԱԽՈՎԻՆ ՎԱՐՄԱՆԱԿ ՊԱԶԳԻՆ ԵՊԱ. ՊԱԼԹՅԱՆԸ. Տ. ՎԱՀԱՆ ԱՌՋՅ. ԿՈՎՏԻՆ ԱՌՋՅ. ԿԵՐՈՎԱՆՅԱՅԻ ՀՈՐՈՉՐՈՒ ԱՆԴԱՄ ՄՏՔԻՆ ԿԱՄՍՈՎԱԿԱՆԸ. ՎԱՐԴԵՏԸ ԱՎԵՏԻՔ ԻՍՏԱԿՎԱՆԸ. ԵՎԼ ՍՈՀԱԿ ԵՊԱ. ՑՈՒ-ՀՈՎՀԱՆՆԻՑԱՆԸ. 1955 թ. ՄԱՅԻՍ

Բոլոր հանդեսներում ու խնջովյաներում առաջին բաժակը Էջմիածնի համար էին բարձրացնում և ուղի վրա երգում էին հինավոր երգեր՝ նրան ձոնված.

«Էջ Միածնն ի Հօրէ, և լոյս փառաց ընդ նմա...»

Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս»:

Հայերը Էջմիածնի անունով էին երդում և այդ երդում հավասար էր Աստծու անունով երդումին: Եվ վերջապես, երբ Էջմիածնին վտանգ էր սպառնում՝ հայեր՝ ինչքան էլ որ ընկանված լինեին, գենքով կանգնում էին նրան պաշտպան, ինչպես եղավ, օրինակի համար 1903 թվին, երբ ցարական կառավարությունը գրավեց եկեղեցու կալվածքները, ժողովուրդը գենքի դիմեց, արյուն խափեց երկու կողմից, և կառավարությունը ստիպված գիշեց և վերադարձեց կալվածքները խաղաղեցնելու համար ըմբռատացած ժողովրդին:

Հայ ժողովուրդը բոլոր դարերում միշտ էլ, անընդհատ, իր ազգային գոյության համար, նրա սկզբունքների՝ պետության, հողի, լեզվի, կրոնի, մշակույթի պահպանության համար կոիվ է մղել. և որովհետև պետությունը կորցնելուց հետո նրա ազգային գոյության սկզբունքները ամփոփվել էին եկեղեցու մեջ, ուստի եկեղեցու պաշտպանության համար մղված կոիվը նա համարել է ազգային գոյության պաշտպանության կոիվ:

Գրություն լրացնելու համար մի երկու խոսք էլ Էջմիածնի կատարած գրական-կրթական դերի մասին: Շատ մեծ է և անգնահատելի նրա դերը այդ բնագավառում:

Սուազին տպարանը հայ հողի վրա իր թղթի գործարանով միասին, բացվեցին Էջմիածնում 18-րդ դարում: Շատ կրոնական, պատմական, գիտական, քաղաքական գորքեր լույս տեսան այդ տպարանից: Էջմիածնին ունեցավ իր ամսագիրը, որ տևեց երկար տարիներ: Ունեցավ իր հոգևոր դպրոցը և ապագա Գևորգյան ճեմարանը, որոնք մատակարարեցին ժողովրդին ընտիր ուսուցիչներ, եկեղեցականներ, գրողներ և գործիչներ: Օրինակի համար, մեր նոր գրականության հիմնադիրը՝ Խաչատոր Աբովյանը, այդ հոգևոր դպրոցի ուսումնավարտ էր:

Էջմիածնի նշանավոր գործերից մեկը, որին հավիտյան շնորհակալ պիտի լինենք, այն էր, որ նա հայալեց և պահեց իր ամուր պատերի մեջ, փրկելով վերջնական կորուստից մեր դարերի հոգևոր գանձը—10.000 հին ձեռագրեր՝ մագաղաթյա և թղթյա, որոնք տեղափոխված են հիմա Երևան և հայտնի է աշխարհին հայ պետական «Մատենադարան» անունով:

Մեր պետության անկումից հետո՝ Էջմիածնի պատմությունը մեր վեց դարերի հայոց ժողովրդի պատմությունն է, անբաժան մեկը մյուսից:

Էջմիածնը, իբրև հոգևոր իշխանություն, նկատի առնելով խավար և բռնակալ դարերի հանգամանքները և կարելիությունները, թերևս իր կարողացածից ավելի պատվով կատարեց իր ազգապաշտպան դերը մինչև Սովետական Հայաստանի ստեղծումը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով հայ ժողովուրդը վերստին ձեռք բերեց իր կորցրած պետականությունը, տեր դարձավ իր հողին, իրավունքներին և ճակատագրին, և իր մշակութային-տնտեսական բոլոր ֆունկցիաները մտան բնական զարգացման ուղիների մեջ:

